- եկրու քաղաքների ներկայացուցիչների համար համատեղ հանդիպումների, գործունեության տարբեր ոլորտների մասնագետների միջեւ գիտաժողովների եւ թեմատիկ հանդիպումների կազմակերպման խթանում,
- փոխշահավետ տնտեսական հարաբերությունների զարգացում:
- համատեղության սկզբունքով փորձի փոխանակման եւ գործընկերության նախաձեռնում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են. ուսուցում, երիտասարդություն, մշակույթ, սպորտ, զբոսաշրջություն, կայուն զարգացում, շրջակա միջավայրի պաշտպանություն եւ գործարարություն, հանրային կառավարման մենեջմենտ, քաղաքաշինություն:

Սույն Բարեկամության պայմանագիրը ներկայացնում է մեր համատեղ կամքը հնարավորինս կարճ ժամանակահատվածում ավարտին հասցնելու Համագործակցության արձանագրության ստորագրումը, այնուհետեւ՝ Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի եւ Ռումինիայի Պիտեշտ քաղաքի միջեւ եղբայրացումը:

*Կատարված է Պիտեշտ քաղաքում, 29 հոկտեմբեր 2012թ., երեք բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, ռումիներեն եւ անգլերեն:*

*Հակասությունների առաջացման պարագայում նախապատվությունը տրվում է անգլերեն տարբերակին:*

Գյումրու համայնքի ղեկավար
Սամվել ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Պիտեշտի քաղաքապետ
Թուդոր ՊԵՆԴԻՈՒԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 173-Ա

### <<ՆՈՐ ՊԱՐՏԵԶ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺԱՆՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի փետրվարի 26-ի <<Գյումրու քաղաքային համայնքի <<Նոր պարտեզ>> փակ բաժնետիրական ընկերությունը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին>> N 51-Ա որոշմամբ հաստատված <<Նոր պարտեզ>> մանկապարտեզներ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 28-րդ կետի <<գ.>> ենթակետով և ելնելով նախակրթարաններում աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման, գործունեության ինքնուրույնության ապահովման անհրաժեշտությունից, ու հիմք ընդունելով թվով 10 նախակրթարանների տնօրենների դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. <<Նոր պարտեզ>> մանկապարտեզներ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպել բաժանման ձևով՝ թիվ 5, թիվ 6, թիվ 9, թիվ 11, թիվ 20, թիվ 21, թիվ 22, թիվ 26, թիվ 28, թիվ 30(Ձանգակ) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ օրենքով սահմանված կարգով արտաքին կառավարիչ նշանակելու և վերջինիս կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո վերակազմակերպման վերաբերյալ վճիռ կայացնելու խնդրանքով:

3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի փետրվարի 26-ի <<Գյումրու քաղաքային համայնքի <<Նոր պարտեզ>> փակ բաժնետիրական ընկերությունը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին>> N 51-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Ա.Ադամյան | | |
| Գ.Ադամյան | | |
| Ա.Բադեյան | | |
| Ա.Բաղրամյան | | |
| Լ.Բարսեղյան | | |
| Մ.Գաբոյան | | |
| Ա.Գրիգորյան | | |
| Վ.Եղիգարյան | | |
| Գ.Թաթարյան | | |
| Հ.Խաչատրյան | | |
| Հ.Կարապետյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Վ.Հունանյան | | |
| Ն.Մեսրոպյան | | |
| Ռ.Մխիթարյան | | |
| Է.Մկրտչյան | | |
| Վ.Շիրինյան | | |
| Ե.Պողոսյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Ա.Վարդանյան | | |
| Տ.Փանոսյան | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**Իսկականի հետ ճիշտ է՝**
**աշխատակազմի քարտուղարի ժ/պ** **Ռ.Ասփարյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,**
**հասցե՝ Վարդանանց հր. 1**
**հեռ. (+374312) 34605; 32606,**
**էլ.փոստ. Gyumri@Gyumri.am**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**<<_22_>> _նոյեմբերի_ 2012թվականի N_174_-Ա**

### ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 22 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հաշվի առնելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված սոցիալապես անապահով, թվով 22 անձանց դրամական օգնություն խնդրելու վերաբերյալ դիմումներն ու դրանք հիմնավորող փաստաթղթերը և ուսումնասիրման արդյունքները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել ընդամենը 310000 (երեք հարյուր տասը հազար) դրամ՝ սոցիալապես անապահով թվով 22 անձանց դրամական օգնություն տրամադրելու նպատակով՝ ցուցակը համաձայն հավելվածի:

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

**Ա.Ադամյան**
**Գ.Ադամյան**
**Ա.Բադեյան**
**Ա.Բաղրամյան**
**Լ.Բարսեղյան**
**Մ.Գաբոյան**
**Ա.Գրիգորյան**
**Վ.Եղիգարյան**
**Գ.Թաթարյան**
**Հ.Խաչատրյան**
**Հ.Կարապետյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Վ.Հունանյան**
**Ն.Մեսրոպյան**
**Ռ.Մխիթարյան**
**Է.Մկրտչյան**
**Վ.Շիրինյան**
**Ե.Պողոսյան**
**Մ.Սահակյան**
**Ա.Վարդանյան**
**Տ.Փանոսյան**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է՝**
**աշխատակազմի քարտուղարի ժ/պ** **Ռ.Ասատրյան**

**Հավելված՝**
**Գյումրի համայնքի ավագանու**
**2012թվականի նոյեմբերի 22-ի**
**N 174-Ա որոշման**

# Ց ՈՒ Ց Ա Կ
# ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ,ԹՎՈՎ 22 ԱՆՁԱՆՑ

| | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ | ՀԱՍՑԵ | ԳՈՒՄԱՐ /ՀՀդրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Այվազյան Ռուբեն | Անի թաղամաս, 11փողոց, 3 շենք,17 բնակարան | 100000 |
| 2. | Սարգսյան Արմանուշ Գևորգի | Տրդատ Ճարտարապետի փողոց, 34 շենք, 6ա բնակարան | 10 000 |
| 3. | Զաքարյան Անահիտ Աղվանի | Մուշ 2 թաղամաս, 4/3 շենք, 60 բնակարան | 10 000 |
| 4. | Խաչատրյան Հեղինե | Սևյան փողոց, 28 գ շենք, 10 բնակարան | 10 000 |
| 5. | Դարբինյան Լիանա | Մուշ 2 թաղամաս, 4/3 շենք, 49 բնակարան | 10 000 |
| 6. | Թորոսյան Սիլվա | Ռուսթավելի փողոց, 4 նրբանցք, 3 տուն | 10 000 |
| 7. | Հակոբյան Կարինե | Տրդատ Ճարտարապետի փողոց, 34 շենք, 4 բնակարան | 10 000 |
| 8. | Թաթարյան Էդվարդ Գուրգենի | Գարեգին Նժդեհի փողոց, 17 շենք, 34 բնակարան | 10 000 |
| 9. | Ղուկասյան Ջուլիետա | Աճեմյան փողոց, 26 տուն | 10 000 |
| 10. | Կիրակոսյան Լևոն Հակոբի | Հնոցավան 3 շարք, 24 տուն | 10 000 |
| 11. | Ժամակոչյան Արփենիկ Հարությունի | 236/205 տնակ | 10 000 |
| 12. | Մարտիրոսյան Արևհատ | Շերամի փողոց, 5 շենք, 33 բնակարան | 10 000 |
| 13. | Սարգսյան Անուշավան Ղարիբի | Անտառավան 5 թաղամաս, 30 շենք, 14 բնակարան | 10 000 |
| 14. | Ավագյան Լուսիկ | Շիրակացի փողոց, 1 փակուղի, 33 տուն | 10 000 |
| 15. | Հարությունյան Ժենյա | 220/096 ա տնակ | 10 000 |
| 16. | Գրիգորյան Սուսաննա | Մուշ 2 թաղամաս, 2/2 շենք, 60 բնակարան | 10 000 |
| 17. | Ղազարյան Գոհար | Բուլվարային ռադիո գործարանի 2-րդ հանրակացարան | 10 000 |
| 18. | Հովհաննիսյան Ֆրումետա | Զինվորական 8-րդ թաղամաս, 6շենք, 18 բնակարան | 10 000 |
| 19. | Ասոյան Գոհարիկ | Զինվորական 8-րդ թաղամաս, 6շենք, 23 բնակարան | 10 000 |
| 20. | Գևորգյան Մանուշակ | Օղանավակայանի տարածք, 152/220 տնակ | 10 000 |
| 21. | Հակոբյան Մարինե Սամվելի | Եղիշե Չարենցի փողոց, 13ա շենք, 7ա ծեղնահարկ | 10 000 |
| 22. | Առաքելյան Թամարա | | 10 000 |

Ընդամենը 310 000 (երեք հարյուր տասը հազար) դրամ:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ** ժ/պ **Լ. ՋԻԼԱՎՅԱՆ**

**Կատարող**
**Ա. Տաշչյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<_22_>> _նոյեմբերի_ 2012թվականի N_175_-Ա

### ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 153-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 4-ի <<Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ղարիբջանյանի խճուղի թիվ 3/11 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտը վարձակալության տրամադրելու մասին>> N153-Ա որոշմամբ՝ Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2643298 վկայական) Ղարիբջանյան խճ.3/11 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտը որոշվել է 99 /իննսունինը/ տարի ժամկետով վարձակալության տրամադրել քաղաքացի Սերգեյ Ասատրյանին՝ ամսական 27500 (քսանյոթ հազար հինգ հարյուր) դրամ վարձավճարով:

Հաշվի առնելով գույքի վարձակալության պայմանագրի առ այսօր կնքված չլինելու և շենքը վարձակալին համապատասխան հանձման-ընդունման ակտով փոխանցված չլինելու փաստը, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ շենքը վարձակալությամբ որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի տրամադրելը չի բխում համայնքի շահերից, և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով, **համայնքի ավագանին որոշում է.**

1. Չեղյալ ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 4-ի <<Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ղարիբջանյանի խճուղի թիվ 3/11 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտը վարձակալության տրամադրելու մասին>> N153-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (19) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) |
|---|---|---|
| Ա.Ադամյան | | Հ.Կարապետյան |
| Գ.Ադամյան | | Վ.Հունանյան |
| Ա.Բադեյան | | |
| Ա.Բաղրամյան | | |
| Լ.Բարսեղյան | | |
| Մ.Գաբոյան | | |
| Ա.Գրիգորյան | | |
| Վ.Եղիգարյան | | |
| Գ.Թաթարյան | | |
| Հ.Խաչատրյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Ն.Մեսրոպյան | | |
| Ռ.Մխիթարյան | | |
| Է.Մկրտչյան | | |
| Վ.Ծիրինյան | | |
| Ե.Պողոսյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Ա.Վարդանյան | | |
| Տ.Փանոսյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Աստոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Գյումրի
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_04_» հոկտեմբերի 2012թվականի N_153_-Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 3/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սերգեյ Ասատրյանը դիմել է Գյումրու քաղաքապետին /դիմումը գրանցված է քաղաքապետարանում 2012թվականի սեպտեմբերի 18-ի Ա-4459/, Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող /հիմք անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2643298 վկայական/ Ղարիբջանյանի խճ. թիվ 3/11 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտը վարձակալելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոհիշյալը, հիմք ընդունելով «ԳԱԳԵՄԱ» ՍՊԸ-ի կողմից տրված գնահատման ակտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ղարիբջանյան խճուղի թիվ 3/11 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտը 99 /իննսունինը / տարի ժամկետով վարձակալության տրամադրել քաղաքացի Սերգեյ Ասատրյանին:
2. Վարձավճարի գին սահմանել ամսական 27500 /քսանյոթ հազար հինգ հարյուր/ դրամ:
3. Հանձնարարել քաղաքապետարանի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնին՝ կնքելու գույքի վարձակալության պայմանագիր:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
ԿՈՂՄ (8) — ԴԵՄ ՉԿԱ — ՁԵՌՆՊԱՀ՝ ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ
Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Մ.ՍԱՀԱԿՅԱՆ
Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ
Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 176 -Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 114-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքային համայքնի ավագանու 2012թվականի օգոստոսի 1-ի <<Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ -13 մակնիշի ծառայողական ավտոմեքենան օտարելու մասին>> N 114-Ա որոշմամբ Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ-13 մակնիշի 1980 թվականի արտադրության, շարժիչ 2171444, թափք 3273, հենասարք 0003158, 4793ADB պետհամարանիշով ծառայողական ավտոմեքենան աճուրդային եղանակով օտարվել է, <<Գագեմա>> ՍՊԸ-ի կողմից 2012թվականի հուլիսի 26-ի N 98 հաշվետվություն եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից սահմանված օտարման մեկնարկային գնով, որը կազմել է 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության <<Փորձագիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության ապրանքագիտական փորձաքննության փորձագետի 2012թվականի հոկտեմբերի 29-ի N 31881210 եզրակացության համաձայն ԳԱԶ-13 մակնիշի ծառայողական ավտոմեքենայի շուկայական արժեքը փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ Հայաստանի Հանրապետության գործող շուկայական գներով կարող է կազմել 4940000 /չորս միլիոն ինը հարյուր քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ: Այսինքն, վերոհիշյալ ծառայողական ավտոմեքենան օտարվել է ակիայտ սխալ գնահատմամբ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Չեղյալ ճանաչել Գյումրու քաղաքային համայքնի ավագանու 2012թվականի օգոստոսի 1-ի <<Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ -13 մակնիշի ծառայողական մեքենան օտարելու մասին>> N 114-Ա որոշումը:

2. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ ԳԱԶ -13 մակնիշի ծառայողական մեքենան ընդունել քաղաքապետարանի հաշվեկշիռ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Փորձագիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության ապրանքագիտական փորձաքննության փորձագետի 2012թվականի հոկտեմբերի 29-ի N 31881210 եզրակացությամբ գնահատված արժեքը:

| Կողմ (14) | Դեմ (0) | Ձեռնպահ (7) |
|---|---|---|
| Ա.Ադամյան | | Գ.Ադամյան |
| Ա.Բաղրամյան | | Ա.Բադեյան |
| Լ.Բարսեղյան | | Հ.Կարապետյան |
| Մ.Գաբոյան | | Վ.Հունանյան |
| Ա.Գրիգորյան | | Ն.Մեսրոպյան |
| Վ.Եղիզարյան | | Ե.Պողոսյան |
| Գ.Թաթարյան | | Տ.Փանոսյան |
| Հ.Խաչատրյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Ռ.Մխիթարյան | | |
| Է.Մկրտչյան | | |
| Վ.Ծիրինյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Ա.Վարդանյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ր.Աստվածատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Գյումրի
հասցե. Վարդանանց հր. 1
հեռ. /+374312/ 34605, 48701
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_01_» _օգոստոսի_ 2012թվականի N_114-Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶ-13 ՄԱԿՆԻՇԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ-13 մակնիշի 4793 АДВ պետհամարանիշով ծառայողական ավտոմեքենան շահագործվել է շուրջ 30 տարի՝ գերազանցելով շահագործման նորմատիվ ժամկետը, այժմ շահագործելու համար պահանջվում է ամենօրյա վերանորոգում և զգալի ծախսեր պահեստամասերի ձեռքբերման և վերանորոգման համար:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ-13 մակնիշի 1980թվականի արտադրության, շարժիչ 2171444, թափք 3273 , հենասարք 0003158, 4793 АДВ պետհամարանիշով ծառայողական ավտոմեքենան օտարել աճուրդային եղանակով:

2. Ելնելով «Գազեմա» ՍՊԸ–ի կողմից 2012թվականի հուլիսի 26-ի N 98 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից օտարման մեկնարկային գին սահմանել 100 000 (**մեկ հարյուր հազար**)_դրամ:
3. Ավտոմեքենայի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

**ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**
**ԿՈՂՄ (8)** **ՁԵՌՆՊԱՀ՝**
**ՉԿԱ**

**Հ.ՊՈՂՈՍՅԱՆ**

**Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

**Գ.ԱԴԱՄՅԱՆ**

**Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

**Մ.ՍԱՀԱԿՅԱՆ**

**Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

**01 օգոստոսի 2012թ.**
**ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<_22_>> _նոյեմբերի_ 2012թվականի N_177_-Ա

## <<ԳՐԵՅԴԵՐ>> ՄԱԿՆԻՇԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի տրամադրության տակ գտնվող մեքենա-մեխանիզմները, որոնք իրականացնում են քաղաքի բարեկարգման աշխատանքները, մաշված են և հնարավոր չէ դրանց հետագա շահագործումը:

Անհրաժեշտություն կա գնել մեկ հատ գրեյդեր մակնիշի մեխանիզմ՝ քաղաքի բարեկարգման աշխատանքներն իրականացնելու համար:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետ Լ. Ջիլավյանին՝ Գյումրի համայնքի բյուջեի ֆոնդային մասից հատկացնել 6000000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ գրեյդեր մակնիշի մեխանիզմ ձեռք բերելու նպատակով:

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Ա.Ադամյան | | |
| Գ.Ադամյան | | |
| Ա.Բաղեյան | | |
| Ա.Բաղրամյան | | |
| Լ.Բարսեղյան | | |
| Մ.Գաբոյան | | |
| Ա.Գրիգորյան | | |
| Վ.Եղիգարյան | | |
| Գ.Թաքարյան | | |
| Հ.Խաչատրյան | | |
| Հ.Կարապետյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Վ.Հունանյան | | |
| Ն.Մեսրոպյան | | |
| Ռ.Մխիթարյան | | |
| Է.Մկրտչյան | | |
| Վ.Շիրինյան | | |
| Ե.Պողոսյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Ա.Վարդանյան | | |
| Տ.Փանոսյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Աբրահամյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 178 -Ա

### «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԱՆ ԷՄՄԱ ԵՐՎԱՆԴԻ ՋՈԹՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Էմմա Երվանդի Ջոթյանը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ և սկզբնական հաշվառման է վերցվել «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կենտրոնի կողմից (հաշվառման համարը՝ 2), տարածքային հաշվառման է վերցված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի երեխաների պաշտպանության բաժնում (հաշվառման համարը՝ 213), կենտրոնացված հաշվառման է վերցվել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (հաշվառման համարը՝ 1487), այժմ բնակվում է «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կենտրոնում («Անի» թաղամաս, Ե. Չարենց թիվ 6) և ելնելով այն հանգամանքից, որ Էմմա Երվանդի Ջոթյանը չունի սեփական, կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածություն, վերջին հինգ տարվա ընթացքում իրեն պատկանող բնակելի տարածություն չի օտարել և համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» 23.07.2003թ. թիվ 983-Ն որոշման, օգտվում է բնակարան ստանալու իրավունքից:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 983-Ն որոշման 2-րդ և 8-րդ կետերի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Էմմա Երվանդի Զոթյանին հաշվառել՝ որպես բնակարանի կարիք ունեցողի:

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

**Ա.Ադամյան**
**Գ.Ադամյան**
**Ա.Բադեյան**
**Ա.Բաղրամյան**
**Լ.Բարսեղյան**
**Մ.Գաբոյան**
**Ա.Գրիգորյան**
**Վ.Եղիգարյան**
**Գ.Թաթարյան**
**Հ.Խաչատրյան**
**Հ.Կարապետյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Վ.Հունանյան**
**Ն.Մեսրոպյան**
**Ռ.Մխիթարյան**
**Է.Մկրտչյան**
**Վ.Շիրինյան**
**Ե.Պողոսյան**
**Մ.Սահակյան**
**Ա.Վարդանյան**
**Տ.Փանոսյան**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**Իսկականի հետ ճիշտ է՝**

**աշխատակազմի քարտուղարի ժ/պ** **Ռ.Ս[illegible]տրյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 179 -Ա

### «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԱՆ ԷԼԶԱ ՀԱՅԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Էլզա Հայկի Հարությունյանը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ և սկզբնական հաշվառման է վերցվել «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կենտրոնի կողմից (հաշվառման համարը՝ 12), տարածքային հաշվառման է վերցված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի երեխաների պաշտպանության բաժնում (հաշվառման համարը՝ 221), կենտրոնացված հաշվառման է վերցվել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (հաշվառման համարը՝ 1509), այժմ բնակվում է «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կենտրոնում («Անի» թաղամաս, Ե. Չարենց թիվ 6) և ելնելով այն հանգամանքից, որ Էլզա Հայկի Հարությունյանը չունի սեփական, կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածություն, վերջին հինգ տարվա ընթացքում իրեն պատկանող բնակելի տարածություն չի օտարել և համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» 23.07.2003թ. թիվ 983-Ն որոշման, օգտվում է բնակարան ստանալու իրավունքից:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 983-Ն որոշման 2-րդ և 8-րդ կետերի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

էլզա Հայկի Հարությունյանին հաշվառել՝ որպես բնակարանի կարիք ունեցողի:

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Ա.Ադամյան | | |
| Գ.Ադամյան | | |
| Ա.Բադեյան | | |
| Ա.Բաղրամյան | | |
| Լ.Բարսեղյան | | |
| Մ.Գաբոյան | | |
| Ա.Գրիգորյան | | |
| Վ.Եղիգարյան | | |
| Գ.Թաթարյան | | |
| Հ.Խաչատրյան | | |
| Հ.Կարապետյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Վ.Հունանյան | | |
| Ն.Մեսրոպյան | | |
| Ռ.Մխիթարյան | | |
| Է.Մկրտչյան | | |
| Վ.Շիրինյան | | |
| Ե.Պողոսյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Ա.Վարդանյան | | |
| Տ.Փանոսյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Սաֆարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<_22_>> _նոյեմբերի_2012թվականի N_180_-Ա

### «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԱՆ ԼԻԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Լիաննա Սամվելի Առաքելյանը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձ և սկզբնական հաշվառման է վերցվել «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կենտրոնի կողմից (հաշվառման համարը՝ 3), տարածքային հաշվառման է վերցված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի երեխաների պաշտպանության բաժնում (հաշվառման համարը՝ 211), կենտրոնացված հաշվառման է վերցվել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (հաշվառման համարը՝ 1490), այժմ բնակվում է «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կենտրոնում («Անի» թաղամաս, Ե. Չարենց թիվ 6) և ելնելով այն հանգամանքից, որ Էլզա Հայկի Հարությունյանը չունի սեփական, կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածություն, վերջին հինգ տարվա ընթացքում իրեն պատկանող բնակելի տարածություն չի օտարել և համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» 23.07.2003թ. թիվ 983-Ն որոշման, օգտվում է բնակարան ստանալու իրավունքից:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի հուլիսի 23-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 983-Ն որոշման 2-րդ և 8-րդ կետերի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Լիաննա Սամվելի Առաքելյանին հաշվառել՝ որպես բնակարանի կարիք ունեցողի:

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

**Ա.Ադամյան**
**Գ.Ադամյան**
**Ա.Բադեյան**
**Ա.Բաղրամյան**
**Լ.Բարսեղյան**
**Մ.Գաբոյան**
**Ա.Գրիգորյան**
**Վ.Եղիգարյան**
**Գ.Թաթարյան**
**Հ.Խաչատրյան**
**Հ.Կարապետյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Վ.Հունանյան**
**Ն.Մեսրոպյան**
**Ռ.Մխիթարյան**
**Է.Մկրտչյան**
**Վ.Ծիրինյան**
**Ե.Պողոսյան**
**Մ.Սահակյան**
**Ա.Վարդանյան**
**Տ.Փանոսյան**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**Իսկականի հետ ճիշտ է՝**
**աշխատակազմի քարտուղարի ժ/պ** **Ռ.Սամսոնյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 181-Ա
<<ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Արա Վարդանյանը դրամական նվիրատվություն ստանալու խնդրանքով:

Համահայկական այս կառույցը,որը հիմնվեց Հայաստանի անկախ պետության կազմավորմանը զուգընթաց, արդեն երկու տասնամյակ եզակի առաքելություն է իրականացնում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով,հիմք ընդունելով <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Արա Վարդանյանի խնդրանքը և ելնելով հարցի լուծման անհրաժեշտությունից՝ համայնքի ավագանին որոշում է.

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամին Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից անկանխիկ հատկացնել 1000000 /մեկ միլիոն/ դրամ օգնություն, այն փոխանցելով << Կենտրոնական բանկ SWIFT: CBRAAM 22 ,103003215672 /հայկական դրամ/հաշվեհամարին:

**Կողմ (21)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

**Ա.Ադամյան**
**Գ.Ադամյան**
**Ա.Բադեյան**
**Ա.Բաղրամյան**
**Լ.Բարսեղյան**
**Մ.Գաբոյան**
**Ա.Գրիգորյան**
**Վ.Եղիգարյան**
**Գ.Թաթարյան**
**Հ.Խաչատրյան**
**Հ.Կարապետյան**
**Տ.Հովհաննիսյան**
**Վ.Հունանյան**
**Ն.Մեսրոպյան**
**Ռ.Մխիթարյան**
**Է.Մկրտչյան**
**Վ.Շիրինյան**
**Ե.Պողոսյան**
**Մ.Սահակյան**
**Ա.Վարդանյան**
**Տ.Փանոսյան**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**Իսկականի հետ ճիշտ է՝**
**աշխատակազմի քարտուղարի ժ/պ** **Ռ.Ասատրյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 34605; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> նոյեմբերի 2012թվականի N 182 -Ա

## ՀԱՄԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համիկ Պարույրի Կիրակոսյանը ծնվել է Լենինականում ավանդական երկաթուղայինի ընտանիքում: Սովորել և ավարտել է Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագիտական ֆակուլտետը: Աշխատել է ՀԼԿԵՄ Անիի շրջկոմում որպես դպրոցական բաժնի վարիչ, այնուհետև ՀԼԿԵՄ Արթիկի շրջկոմի քարտուղար, որտեղից գործուղվել է Մոսկվա կուսակցական բարձրագույն դպրոցում սովորելու: Այնուհետև աշխատանքի է անցել Հայաստանի Կենտկոմում:

Կիևի ասպիրանտուրայում սովորելուց հետո, 1972թ-ից ղեկավարել է Պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի կուսակցական կազմակերպությունը: 1976-ին անցել է աշխատանքի Լենինականի քաղսովետում որպես մշակույթի բաժնի վարիչ:

Նրա նախաձեռնությամբ բացվել են <<Շիրակ>> հեռուստաընկերությունը, Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախումբը, գրադարաններ, Անի թաղամասի Արվեստի քոլեջը և այլն: Նրա հորդորով Լորիս Ճգնավորյանը ուխտագնացություն կազմակերպեց, որի արդյունքում հիմնվեց Արվեստների Ակադեմիան: Աշխարհի տարբեր երկրներում նրա նախաձեռնությամբ ներկայացվել է Գյումրու մշակույթը: Կազմակերպվեց <<Անուշ>> օպերայի 100 - ամյակին նվիրված բեմականացում, որը որպես բացառիկ երևույթ ներկայացվեց նաև Դսեղում:

Հ.Կիրակոսյանի կատարած աշխատանքը բարձր է գնահատվել պետության կողմից, պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով, Լենինականի հուշամեդալով: Պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով, ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե մեդալով, Էջմիածնի հոգևոր մեդալով, ՀՀ վարչապետի մեդալով, արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման: Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր է և Ոսկե մեդալակիր /ինստիտուտի 80 ամյակի առիթով/, ստացել է Գյումրու քաղաքապետարանի <<Ջինանշան>> և Գյումրի քաղաքի Երախտավորի կոչում:

Հաշվի առնելով Գյումրի քաղաքի մշակույթին անմնացորդ նվիրումը, մշակութային արժեքների պահպանման, զարգացման և Գյումրվա արվեստաց կոլորիտը աշխարհին ներկայացնելը և ծննդյան 70 - ամյակի կապակցությամբ և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Համիկ Պարույրի Կիրակոսյանին շնորհել <<Գյումրու պատվավոր քաղաքացի>> կոչում:

Կողմ (20)
Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եղիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Ա.Վարդանյան
Տ.Փանոսյան

Դեմ (1)
Լ.Բարսեղյան

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
աշխատակազմի քարտուղարի ժ/պ